ԱՐՋՈՒՄԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ., դոցենտ

ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այսօր հասարակության հաջող ինստիտուցիոնալ բարեփոխման նախապայմաններից մեկն ինստիտուցիոնալ տեսության հիմնային և ածանցյալ հասկացությունների համակարգված մշակումն ու մեկնաբանությունն է: Սոցիալական ինստիտուտների օգտագործվող սահմանումներն ի սկզբանե այնքան բազմանշանակ են, որ կարող են խորը մոլորության մեջ գցել մարդկանց: Ինստիտուտը, ինստիտուցիան և կազմակերպությունն այսօր շատերի կողմից դիտվում են որպես շարժուն, այլ ոչ թե քարացած (կարծրացած) հասկացություններ՝ դրանք փոփոխուն և հոսուն են: Դրանք մերթ գործածվում են որպես հոմանիշներ, մերթ էլ հակադրվում են մեկը մյուսին: «Յուրաքանչյուր ոք դրանք օգտագործում է նույնքան ավելի հեշտությամբ, որքան քիչ է հասկանում, թե ինչ են դրանք հատկապես նշանակում»[1]: Սակայն, երբ փորձում ես սահմանել այդ հասկացությունները և առանձնացնել մեկը մյուսից, ծագում են բազմաթիվ խնդիրներ և դժվարություններ: Տարբեր գիտություններում գերիշխում են ինստիտուտների իրենց «սեփական» մեկնաբանությունները, որոնք չեն ընդունում գիտությունների հարակից բնագավառներում ձևավորված սահմանումները: Դա հանգեցնում է հասարակության մասին գիտությունների ապահամաձայնեցվածության խորացմանը, հաստատում և «կոնսերվացնում» դրա կատեգորիալ ապարատի համակարգային անավարտությունը, խոչընդոտում հետազոտությունների և հետազոտողների ինտեգրմանը:

Հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքի կատեգորիալ արտացոլման առավել մշակված, էմպիրիկ նյութերով հարստացված համակարգերը այսօր ձևավորվել են սոցիոլոգիայում, տնտեսագիտության և իրավագիտության մեջ: Միևնույն ժամանակ էական տարբերություններն այդ համակարգերում խանգարում են լրիվ ինստիտուցիոնալ հայեցակարգի ստեղծմանը: Եկել է մեկը մյուսին լրացնելու, ինստիտուցիոնալ տեսության ձևավորված կատեգորիալ հավաքակազմի ապարատի մեկուսացվածության հաղթահարման ժամանակը:

Սոցիոլոգիայում ինստիտուտը մեկնաբանվում է որպես «վարքի կանոնների և ստանդարտացված մոդելների սահմանված կարգ: Այդ տերմինն օգտագործվում է տարբեր եղանակներով և հետևաբար հաճախ լինում է երկիմաստ: Սոցիալական ինստիտուտը վերաբերում է մարդկանց մեծ զանգվածներն ընդգրկող խմբավորումներին, որոնց վարքը կառավարվում է նորմերով և կանոններով: Դա նաև «սոցիալական փոխգործողությունների պատմականորեն ձևավորված և ամրացված, կայուն, ինքնավերարտադրվող տեսակներ են, որոնք կոչված են բավարարելու մարդկային այս կամ այն կարիքները»[2]:

Թ.Վեբլենի մեկնաբանությամբ ինստիտուտը սահմանվել է որպես «մտքի ասվածք (ստերեոտիպ)», «խթաններին արձագանքելու սովորական եղանակներ», հասարակության և անձի ու նրանց կողմից կատարվող գործառույթների միջև առանձին հարաբերություններին վերաբերող մտքերի տարածված նկարագիր: Բ.Մարինովսկին, Ա.Ռ.Ռեդկլիֆֆ-Բրաունը, ապա և Տ.Պարսոնսը, ինստիտուտների բնույթը կապել են հասարակության էվոլյուցիայի գործառութային նախադրյալների և հրամայականների իրականացման հետ: Է.Դյուրկգեյմն ինստիտուտները դիտում է որպես «կոլեկտիվ կյանքի ընդհանուր պայմանների» հետ կապված սոցիալական

---

[1] Иншаков О.В. Экономические институты и институции: к вопросу типологии и классификации. //Социологические исследования //, N 9, 2003г, стр.42.
[2] Общая социология: Учебное пособие. Под. ред. Эфендиева. М. „Инфра М„ 2000, стр. 215.

կազմակերպության գործառութային ձևեր: Է.Գոֆմանն ինստիտուտը դասում է հասարակական կյանքի կազմակերպման սոցիալական ձևերի շարքին: Այսպիսով՝ սոցիոլոգիան տնտեսության ինստիտուտների հետազոտության նախադրյալներ է ստեղծել, սակայն դրա այդ առաքելությունը դեռևս հեռու է իր ավարտից:

Վերջին տասնամյակի հետխորհրդային (հիմնականում ռուսական) տնտեսագիտության մեջ ինստիտուցիոնալ հետազոտությունների իսկական եռուզեռ էր սկսվել: Դա կապված է տնտեսության փոխակերպման պահանջմունքների, դասականների նորովի ընթերցման և նոր ինստիտուցիոնալ տնտեսագետների աշխատանքների միջազգային ճանաչման հետ: Հայրենական ինստիտուցիոնալ տնտեսագիտական դպրոցի ձևավորման վրա հատուկ նշանակություն ու ազդեցություն են ունեցել ինչպես արևմտյան (Ռ.Քոուզ, Դ.Նորտ, Օ.Ուիլյամսոն, Ջ.Խոդջսոն, Տ.Էգգերտսոն և ուրիշներ), այնպես էլ ռուսական (Վ.Գ.Գրեբենիկով, Գ.Բ.Կլեյներ, Դ.Ս.Լվով, Վ.Լ.Մակարով, Ա.Ն.Օլեյնիկ, Վ.Մ.Պալտերովիչ, Վ.Լ.Տամբովցև, Ա.Ե.Շաստիտկո և ուրիշներ) գիտնականների աշխատանքները:

Ինստիտուտի ժամանակակից տնտեսագիտական սահմանումները սովորաբար հենվում են տնտեսական սուբյեկտների և նրանց խմբերի գործունեության տարբեր կողմերի նորմերի և կանոնների արտահայտման վրա: Այսպես օրինակ, Վ.Մ.Պալտերովիչը հետազոտելով ինստիտուցիոնալ «ծուղակները», օգտագործում է «ինստիտուտ», «նորմա», «վարքի կանոն» տերմինները որպես հոմանիշներ: Վ.Գ.Գրեբենիկովը ներմուծում է «ռեֆլեքսային նորմայի» հասկացությունը որպես ինստիտուտ հասկանալով փաստացի գործող ռեֆլեքսային նորման և ոչ մի այլ բան բացի դրանից: Ժամանակակից սահմանումների տարբերակներում ինստիտուտը ներկայացվում է և որպես «դերային հարաբերությունների համալիր», և որպես «ավանդույթների և հնամոլությունների ամբողջացված համալիր», և որպես «նորմա պլյուս դրա կատարումը վերահսկող և սատարող մեխանիզմներ»:

Տնտեսական ինստիտուտներն այսօր սահմանվում են որպես «կոլեկտիվ տնտեսական գործունեության հասարակայնորեն ճանաչվող գործառույթակազմակերպական ձևեր, որոնց միջոցով իրագործվում են տնտեսության համակարգային գործառույթները»[1]: Շատ տնտեսագետներ որպես ինստիտուտ են համարում արտադրական գործառույթ իրականացնող ֆիրմաներին, տնային տնտեսություններին, կազմակերպություններին, ֆինանսական-արտադրական խմբերին, բանկերին, բորսաներին, արհմիություններին, պառլամենտը, փողը և այլն:

Գ.Կլեյների կարծիքով տնտեսական ինստիտուտի սահմանման մեջ «նորմա» հասկացության՝ որպես ձևավորվող բաղադրամասի օգտագործումը ոչ միշտ է հիմնավորված: Նորմերի և ինստիտուտների անտարակույս կապի դեպքում նույնիսկ վերջիններիս էությունը չի կարելի հանգցնել առաջիններին: «Նորմը կարելի է ճանաչել որպես ինստիտուտի բնորոշ հատկանիշ, սակայն ոչ դրա սոցիալական էությունը, ինչի հետազոտության համար պահանջվում է մեթոդաբանորեն ավելի լայն սոցիոլոգիական մոտեցում»[2]:

Ինստիտուցիոնալիզմի կատեգորիալ հավաքակազմի չարդարացված պարզեցումը (ռեդուկցիա) հետխորհրդային տնտեսագիտական գրականության մեջ կարելի է համարել Վեբլենի «Անբան դասակարգի տեսությունը» արմատական աշխատության բացթողումներով հրատարակության հետևանք: Պարզվում է այդ աշխատության ռուսերեն թարգմանության ժամանակ ամբողջությամբ բաց է թողնվել հեղինակային այն ենթավերնագիրը, որում ներկայացվում էր «ինստիտուցիա» հասկացությունը: Նման մոտեցումն ավանդույթ էր դարձել նաև Դ.Նորտի, Տ.Էգգերտսոնի և ուրիշների աշխատանքների ռուսերեն թարգմանության ժամանակ, մինչդեռ նրանց աշխատությունների բնագրերում սահմանվում և վերլուծվում է ամենից առաջ

---

[1] Зотов В., Пресняков В., Розенталь В. Институциональные проблемы функционирование и преобразования экономики России // Экономическая наука современной России // N 1, 1999, стр.10.

[2] Клейнер Г. Особенности процессов формирования и эволюции социально-экономических институтов В России. М. „ЦЭМИ „ 2001, стр. 11.

«տնտեսական ինստիտուցիա» հասկացությունը: Դա ամրապնդել է «ինստիտուտ» տերմինի կիրառությունը և «ինստիտուցիա» կատեգորիայի գործնական կորուստը, դրանցից բխող բացառիկությունների նկարագրման ժամանակ: Ժամանակակից վերլուծություններում ու մեկնաբանություններում գործերի այդպիսի իրավիճակը հաճախ կառուցվածքների և գործառույթների սոցիալական ձևերը նկարագրող հասկացությունների նույնականացման պատճառ է դառնում: Դա զգալիորեն դժվարեցնում է արտասահմանյան բնագիր շարադրանքների ընկալումն ու վերլուծությունը, որտեղ ամենաշատ գործածություն է գտնում «ինստիտուցիա» տերմինը և աղքատացնում է հետազոտողների գիտական գործիքակազմը:

Հայրենական գիտնականները հետևելով ռուսական հեղինակներին շատ հաճախ ուշադրություն չեն դարձնում ինստիտուցիոնալիզմի ելակետային կատեգորիաների տարբերության վրա և ժամանակ առ ժամանակ ինստիտուցիան փոխարինում են կազմակերպությունով, կազմակերպությունը սահմանում են որպես ինստիտուտ, իսկ վերջինս մեկնաբանում են որպես գործիք, մարմին կամ մեխանիզմ: Հենց դա էլ որոշում է ելակետային կատեգորիաների համակարգը ձևավորելու և դրանց սահմանումների ձևակերպման անհրաժեշտությունը:

Ինստիտուցիաները՝ տնտեսական սուբյեկտների գործառույթների սոցիալական ձևերն են, որոնք որոշում են տնտեսական սուբյեկտների կարգավիճակն ու դերը հասարակական կեցության արտադրական համակարգում և կազմավորում են տնտեսական հարաբերությունների գործառութային կառուցվածքի համակարգը:

Կազմակերպությունները՝ արտադրության գործընթացում տնտեսական սուբյեկտների միջև կապերի սոցիալական ձևերն են, որոնք որոշում են հասարակության առանձին տարրերի (միավորների) հարաբերությունների համակարգը: Յուրաքանչյուր կազմակերպություն կամ հիմնարկություն ապահովում, սահմանում, ներդնում և կյանքի է կոչում իրեն համապատասխանող ինստիտուցիան: Կազմակերպվածությունը որպես ընդհանուր նպատակին հասնելու գործընթացում տարբեր ֆունկցիաներ (գործառույթներ) կատարող սուբյեկտների միջև հարաբերությունների կայուն համակարգ, ի մի է բերում տարբեր ինստիտուցիաներն ու ինստիտուտները՝ սահմանելով դրանց համաձայնեցվածությունն ու ստորադասվածությունը և միաժամանակ իրականացվելով դրանց հիման վրա:

Հասարակության առանձին տարրերի և գործառութային կառուցվածքների ձևերի, այսինքն՝ ինստիտուցիաների և կազմակերպվածությունների փոխգործողությունը առաջացնում, գոյացնում է տնտեսական համակարգի ինստիտուտներ և կազմակերպական լիազոր մարմիններ: Ինստիտուցիոնալ կազմակերպությունը դառնում է ինստիտուտ, իսկ կազմակերպված ինստիտուցիան՝ մարմին: Այսպիսով, ինստիտուտը հանդես է գալիս որպես համասեռ ինստիտուցիաների կոնկրետ համակարգի իրականացումն ապահովող կազմակերպվածություն: Այդպիսիք են օրինակ, կրթական, գիտական, արհեստակցական, կուսակցական, կրոնական, վարկային և այլ հիմնարկները: Մարմինը ներկայանում է որպես կառուցվածքավորված ինստիտուցիա, ինչն ապահովում է կազմակերպության գործունեությունն ու զարգացումը:

Շատ հաճախ միևնույն բացառիկությունը կարող է դիտվել և որպես ինստիտուտ, և որպես կազմակերպվածության կոնկրետ ձև, ինչը մեծ մասամբ կախված է դրանցից յուրաքանչյուրի ընդգրկվածությունից: Այսպես, վարկատվական ինստիտուտներն ունենալով գործառութային ընդհանուր հիմք կարող են հանդես գալ փոխանակային գրասենյակի, գրավատան, խնայողական դրամարկղի, փոխօգնության դրամարկղի, բանկի և ընդհանրապես վարկային հիմնարկի կարգավիճակով: Ընդգրկվածության մասշտաբի արհամարհումը (անտեսումը) բերում է ինստիտուտներ և կազմակերպություններ հասկացությունների սերտաճմանը, բովանդակային և գործառութային սահմանազատման անհնարինությանը: Այդ իմաստով անհրաժեշտ է տարբերել արհմիությունը որպես ինստիտուտ և արհմիութենական կազմակերպությունը, եկեղեցի ինստիտուտը և եկեղեցական կազմակերպությունը, կուսակցությունը որպես ինստիտուտ և կուսակ-

ցական կազմակերպությունը և այլն: Ձեռնարկությունը ինստիտուտ է, սակայն միայն իր կոնկրետ կազմակերպության՝ գործարանի, ֆաբրիկայի, խանութի, բյուրոյի, ավտոշարասյան և այլնի շրջանակներում, այն ձեռնարկատիրություն ինստիտուցիայի որոշակի կառուցվածքային կեցությունն է իրականացնում:

Այսպիսով, «ինստիտուցիաներն ու ինստիտուտները, տնտեսական համակարգի կազմակերպություններն ու մարմիններն անընդհատ իրականացնում են բարդ փոխվերածումներ՝ դառնալով կեցության կայուն և հաստատուն սոցիալական ձևեր և ծավալվելով դրանց էվոլյուցիոն դրսևորումների բազմազանությունում»[1]:

Ինստիտուցիան որպես ինստիտուտի բովանդակային հիմք որոշում է միատեսակ սուբյեկտների ոչ միայն կոչումը, պաշտոնը, այլև սոցիալական խումբը, դասը, շահերի և հայացքների ընդհանրությունը, ինչպես նաև այլ հատկություններ իրենց գործունեության սոցիալական առանձնահատկությունից ելնելով: Տվյալ հասարակության մեջ սուբյեկտների այդ գործունեությունը չի կարող լինել եզակի. այն մեկ անձի կամ անձանց կողմից միաժամանակ կամ պատմական ժամանակաշրջանի ընթացքում կրկնվող գործողությունների և դրանց արդյունքների ամբողջություն է, ինչը բերում է սոցիալական տարատեսակների կազմավորմանը համապատասխան հասարակայնորեն ճանաչված դերերով, կերպարներով և գործողության ու վարքի նորմերով: Մարդուն վերագրելով առանձնահատուկ սոցիալական նշանակության գործունեություն կատարողի կարգավիճակ՝ ինստիտուցիան որոշում է նրա պատկանելիությունը սուբյեկտների հատուկ ընդհանրությանը, որոնք ըստ գործառույթի կամ գործառութային հատկության, հավասար են:

Ինստիտուցիայի էությունը կայանում է նրա համընդհանրության մեջ, որպես հասարակության անդամների կողմից իրականացվող մարդկային բոլոր գործողությունների սոցիալական ձևի: Ուստի, հասարակության մեջ սկզբունքորեն չեն կարող լինել չինստիտուտացված մարդկային գործողություններ, քանի որ հասարակական էակի ցանկացած գործառույթ իրագործվում է որևէ կոոպերացիայի և աշխատանքի բաժանման մեջ դրա տեղը որոշելու, դրա անհրաժեշտությունը և օգտակարությունը գնահատելու միջոցով: Ինստիտուցիան, ըստ էության, որպես մարդու գործառույթի սոցիալական ձև, ընդհանրապես «մերկ վերացականություն է»[2], ինչը միայն կոնկրետ գործողության մեջ է բովանդակություն ձեռք բերում:

Մարդկանց կոնկրետ գործառույթների սոցիալական բաժանվածությամբ կազմակերպման ձևերի բազմազանությունը ձևավորում է հասարակության ինստիտուտների համակարգը: Այդպիսի համակարգը յուրաքանչյուր մարդու գիտակցության մեջ ձևավորում է երևակայական խմբակցություններ, որոնցից մեկում նա իրեն ընդգրկում և դրանց համապատասխան նա իրեն պահում է որպես սպառող կամ արտադրող, ընտանիքավոր կամ քաղաքացի, աստիճանավոր կամ ձեռնարկատեր: Այս կամ այն ինստիտուտին իրական պատկանելիության և իրեն սուբյեկտիվորեն ու երևակայական դրան դասելու անհամապատասխանությունը կարող է բերել ոչ ինստիտուցիոնալ վարքին, մոլորությանը, տրանսակցիոն ծախսերի մեծացմանը, ինստիտուցիոնալ եկամուտների նվազմանը: Ընդ որում, «մեր ինստիտուտները մեզ կարգավորում են էլ ավելի խստիվ, ինչքան որ մենք քիչ ենք հիշում դրանց դերի մասին»[3]:

Ենթադրվում է, և իրականում յուրաքանչյուր մարդ հանդիսանում է շատ ինստիտուցիաների գործակալ, իրագործելով դրանք իր գործողություններում և հանդես գալով որպես համապատասխան ինստիտուցիոնալ սուբյեկտի ներկայացուցիչ: Գործառույթների սոցիալական բաժանման և ամրագրման գործընթացները հիմնվում են դրանց հանդեպ հասարակության

---

[1] Иншаков О.В. Экономические институты и институции: к вопросу типологии и классификации. //Социологические исследования //, N 9, 2003г, стр.45.

[2] Иншаков О.В. Экономические институты и институции: к вопросу типологии и классификации. //Социологические исследования //, N 9, 2003г, стр.45.

[3] Кули Ч.Х. Человеческая природа и социальный порядок. М. „Идея-Пресс „ 2000г. стр.29.

կայուն դրական կամ բացասական վերաբերմունքի, կյանքի տարբեր բնագավառներում տնտեսության մեջ, գիտությունում, կրոնում, քաղաքականությունում, իրավունքում, բարոյականության մեջ, արվեստում, ընտանիքում, պետության մեջ և այլն այդ գործառույթների կատարման արդյունքների նրա գնահատականների վրա:

Սահմանադրության միջոցով հասարակությունն ընտրում և ամրապնդում է օգտակար ինստիտուցիաները, հասարակական համաձայնության և փոխզիջման հիման վրա ներդաշնակելով դրանք, ինչի արդյունքում տեղի է ունենում դրանց բազմատեսակությունների համախմբումն ինստիտուցիոնալ համակարգի միասնականության մեջ: Մյուս կողմից այն կարող է ընդունվել համընդհանուր կազմակերպության հատուկ մարմնի օրինակ կոնգրեսի որոշման հիման վրա, ինչը հիմնավորվում է հանրաքվեով, համագումարով և հասարակական ներկայացուցչության այլ ձևերով: Հիմնավորելով հասարակական կառուցվածքի սահմանադրական և կոնգրեսիոն սկզբունքները, կարևոր է ելնել նրանից, որ «ոչ թե մարդը գոյություն ունի պետության համար, այլ ընդհակառակը պետությունը գոյություն ունի մարդու համար»[1]:

Հանդես գալով որպես սոցիալական նշանակալից գործոն, կեցության շարժիչ ուժ, ինստիտուտը հավաստում է իր տարրերի գործունեության սոցիալական հատկությունը և գործառութային կարգավիճակը: Դրանով իսկ ուղղակիորեն կամ անուղղակի հաստատվում և ընդգծվում է առանձնահատուկ տարատեսակի սուբյեկտի (էվոլյուցիոնացվող միավորի - Ա.Հ.), գործունեության եղանակի հասարակական իմաստը, ձևը և գնահատականը: Առանձին անհատներին, նրանց խմբերին ու խմբակցություններին մշտապես ամրակցված գործառույթների պարբերաբար կատարմամբ ինստիտուցիաներն ինչպես իրենց գործակալներին, այնպես էլ այլ մարդկանց (նրանց խմբերին ու խմբակցություններին) բերում են հատուկ վիճակի կամ դիրքի: Արդյունքում որոշվում է նրանց սոցիալական կարգավիճակը, ինչն ինստիտուցիայի արդյունքն է՝ նրա ամրապնդումն ապահովողը:

Միևնույն տրամաբանությամբ ձևավորվում է նաև սոցիալապես ընդունված (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) գործառույթի կատարման նորմը (կանոնները, կարգերը, ալգորիթմները, ծեսերը, արարողությունները, օրենքները) և դրա իրագործման սկզբունքները: Նորմը կապված է կարգավիճակի հետ, նորմը կարգավիճակի հայտանիշն է, իսկ միասին նրանք ինստիտուտի բնորոշման հատկանիշներն են: Ինչպիսին էլ որ լինի հասարակության տարատեսակը կոնկրետ մարդու կյանքը պայմանավորված է գործունեության մի տեսակից մյուսին հաջորդական անցումներով: Այնտեղ, որտեղ անցումը մի գործունեությունից դեպի մյուսը հանդիսանում է կյանքի ուղենիշ, այն ուղեկցվում է ինստիտուցիոնալ հատկանիշների վրա հիմնված հատուկ գործողություններով:

Քանի որ ինստիտուցիաները, մի կողմից ունեն օգտակարություն և բավարարում են մարդկանց պահանջմունքներին, իսկ մյուս կողմից, ծախսեր են պահանջում իրենց վերարտադրության համար, այսպիսով՝ օժտված են արժեքով: Կարգավիճակը, ինչն ինստիտուցիան վերագրում է իր գործակալին կամ արտադրանքին, բնութագրվում է օգտակարությամբ, արժեքով (ինչպես հասարակական, այնպես էլ անհատական), բացառիկությամբ և կարևորությամբ: Ի սկզբանե, կարգավիճակը գոյություն ունի որպես ինստիտուցիայի արդյունք, քանի դեռ այն արտադրվում է «ինքն իր համար»: Բայց հենց կարգավիճակը սկսում է արտադրվել «ուրիշների համար», վաճառքի նպատակով, այն փոխակերպվում է ապրանքի, իսկ վերջինս արտադրող ինստիտուցիան՝ եկամուտ բերող կապիտալի: Ուստի, կարգավիճակը որպես բարիքի և ծախսի միասնություն, որպես ապրանք կարելի է ստեղծել, բաշխել, սպառել, փոխանակել, վաճառել, գնել, նվիրել, ժառանգել, վարձակալության տալ, կորցնել և այլն, ընդ որում ստանալով կատարված ծախսերի փոխհատուցում, եկամուտ, ինչպես նաև կրելով համապատասխան ծախսեր ու կորուստներ՝ առաջացնելով արդյունքներ և վնասներ:

---

[1] Маритек Ж. Человек и государство. М. „Идея-Пресс „ 2000, стр.21.

Ինստիտուցիոնալ կապիտալը, կապիտալի կոնկրետ ձևերից մեկն է, որն արտացոլում է այս կամ այն տնտեսավարող սուբյեկտների կողմից եկամուտ ստանալու հնարավորությունը կարգավիճակի ձեռքբերման հաշվին, որոշակի ինստիտուտներին իրենց պատկանելիությամբ պայմանավորված: Հարաբերությունների այդ կազմակերպված համակարգերում մարդկանց մեծ խմբեր ինտեգրվում են մասնակիցների կողմից ընդունված ընդհանուր շահերի համաձայնեցման մեխանիզմի հիման վրա, որն ընդգրկում է գոյություն ունեցող որոշակի կանոններ, արժեքների վերարտադրության նորմաներ, ավանդույթներ և խթաններ:

Ինստիտուցիաներն իրենց գործակալներին վերապահելով վերանհատական որակներով օժտված հատուկ գործող անձերի մշտական դերեր, որոշում են նրանց հասարակական գինը, պատմականորեն կոնկերտ պայմանների համար: Ինստիտուցիաների գործակալները որոշվում, նույնականացվում և տարբերակվում են նրանց վիճակի, պաշտոնի, կոչման, կարգավիճակի միջոցով, այսինքն՝ սոցիալական հատկանիշներով: Ինստիտուցիոնալ հասկացություններում արտացոլվում է կեցության գործառութային բնութագրումն ու տարբերակումը, ինչը կենսագործունեության համասեռ հատկանիշներով օժտված բոլոր գործակալների ինտեգրման պայման ու արդյունք է ինստիտուտի շրջանակներում:

Սոցիալական ինստիտուտների տեսակավորումը և դասակարգումը կարող է իրականացվել հայտանիշների որոշակի համակարգի միջոցով: Ռուսական տնտեսագիտության մեջ տնտեսական ինստիտուտների տեսակավորման և դասակարգման արդիական հայեցակարգ է և առաջարկվել է Գ.Բ.Կլեյների կողմից, նա որպես հայտանիշներ առանձնացնում է սուբյեկտների տեսակը, որոշումների ընդունման ոլորտը, ծագման ժամանակը, կայունությունը, ձևայնացման աստիճանը, ինստիտուտների տեղեկացման և վերահսկողության մեխանիզմները: Այդպիսի մոտեցմանը համապատասխան ինստիտուտները բաժանվում են ըստ հետևյալ մակարդակների՝ մակրո-, միկրո և նանոտնտեսականի[1]:

Մյուս մոտեցումն առանձնացնում է համընդհանուր, մասնակի և եզակի կամ բազային և օժանդակ ինստիտուտների խմբեր: Ընդ որում խմբավորման այդ հայտանիշների հատման դեպքում ծագում են կոնկրետ ինստիտուտների բազմակողմանի բնութագրեր: Լրիվությամբ համաձայնվելով Օ.Ինշակովի հետ, հարկ է նշել, որ այդ դեպքում դիտարկման շրջանակներից դուրս են մնում դասակարգման բազմաթիվ ամենատարբեր հնարավոր տեսանկյուններ, որոնց կիրառությունը կնպաստեր տվյալ բացառիկության (ֆենոմենի) ավելի լրիվ մոդելի ստեղծմանը՝ որպես ինստիտուտների առանձնացված տիպերի և տեսակների օրգանական ամբողջության, որպես տվյալ հասարակությանը հատուկ ամբողջական ինստիտուցիոնալ համակարգը նկարագրող[2]:

Ինստիտուտների դասակարգման համակարգային մեթոդաբանության զարգացման տեսակետից հատկապես հետաքրքիր է Օ.Ուիլյամսոնի կողմից նրա հայտնի սխեմայի հիման վրա մշակված ինստիտուցիաների էվոլյուցիայի ստորադասվածության (հիերարխիկ) չորս մակարդակային բուրգի կառուցման փորձը գոյաբանական և իմացաբանական պլանների միասնությամբ արտահայտված[3]: Մոդելը հաստատվել է պատմական և արդիական պրակտիկայի շատ փաստերով և մասնագետների կարծիքով կարող է ծառայել կոնկրետ տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքի ճանաչմանն ու գործնական զարգացմանը:

Նրա «Սոցիալական ընդգրկվածության» կառուցվածքի ելակետային մակարդակում գտնվում են «նախածնողական» նորմերը, սովորույթները, կանոնները, բարքերը, ավանդույթները, ծեսերը, որոնք դարձել են ժամանակակից հասարակության և նրա կազմակերպություն-

---

[1] Клейнер Г. Особенности процессов формирования и эволюции социально-экономических институтов в России. М. „ЦЭМИ РАН „ 2001, стр. 16.

[2] Иншаков О.В. Экономические институты и институции: к вопросу типологии и классификации. //Социологические исследования //, N 9, 2003г, стр.47.

[3] Williamson O. Transaction Cost Economics: How it Works: Where it is Headed //De Economist 1998 Vol 146, N1 p.23-58//

ների մարդկանց գիտակցության մեջ խոր արմատներ գցած հիմնական հնամոլությունները: Ինստիտուցիաների այդ արմատական շերտը պատմականորեն ներառել է հասկացություններ, որոնք մարդուն թույլ են տվել առանձնացնել իրեն բնությունից, գործել հասարակության մեջ, գիտակցել իր էությունը և ֆունկցիոնալ (գործնական) բնութագրերը հասարակության որոշակի խմբակցությանն իր պատկանելիությամբ պայմանավորված: Ելակետային մակարդակի այդ հասկացություններից շատերը մեկ անգամ չէ, որ կրել են պատմական և միջմշակութային փոխակերպություն, մյուսներն անհետացել են ժամանակակից հասարակության կազմավորման երկարատև էվոլյուցիոն գործընթացում: Դրանց պարզաբանմանը կարող են նպաստել պատմաբանների, լեզվաբանների, հնեագետների, մշակութագետների և գիտության տարբեր բնագավառների այլ ներկայացուցիչների հետազոտությունները:

Չնայած այդ մակարդակի վերլուծությունը հիմնականում ձեռնարկվում է փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմության, մշակութաբանության, հնեագիտության ներկայացուցիչների կողմից, այն մեթոդաբանորեն կարևոր է տնտեսագետների համար: Այդ մակարդակի ինստիտուցիաները զարգանում են դարերով և հազարամյակներով՝ ծնելով տնտեսավարման և այլ սոցիալական գործունեության բնույթի վրա ազդող արտակարգ ամուր ինստիտուտներ (ընտանիք, տոհմ, համայնք և այլն):

Դասակարգման հետագա կատարելագործման տեսակետից շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ ինստիտուցիաների տարածվածությունն ու կապերը յուրաքանչյուր կոնկրետ հասարակության դեպքում տարբեր են. որոշները գործառութային են ամբողջ հասարակության շրջանակներում մյուսները ստանում են խորհրդանշական նշանակություն առանձին սոցիալական խմբերում, մի որոշ մասը գոյություն ունեն առանձնացված և երկարատև, շատերը սերտորեն կապված են իրենց լրացնող ֆորմալ և ոչ ֆորմալ (պաշտոնական և ոչ պաշտոնական) ինստիտուտների հետ և ավելի մեծ չափով են ենթակա արդիականացման ու վերափոխության: Սոցիալական ձևավորման տարբեր մեխանիզմների միջոցով ինստիտուցիաները ձգտում են գրավել բոլոր մատչելի սոցիալական տարածությունները, ամբողջացնել այն, սոցիալիզացման բոլոր սուբյեկտների համար միասնական նորմերի, կանոնների, համաձայնագրերի և կարգավիճակների տարածման միջոցով այն դարձնել կայուն և համասեռ: Հասարակության կյանքում ինստիտուցիաների և ինստիտուտների կազմավորման, ներդրման և տարածման ընթացքում ծագող կարգավորվածությունը նախաձեռնում և ուժեղացնում է դրա կազմակերպումը, ինստիտուցիոնալ ձևավորումներ է վերարտադրում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Երկրորդ մակարդակում ինստիտուցիաները դասավորվում են միայն հասարակական կյանքի գիտակցված, մտադրված կազմակերպման հիմունքներով և մասնակիորեն տարերային գործընթացներով պայմանավորված: Այս մակարդակում ոչ ֆորմալ (ոչ պաշտոնական) հիմքի վրա կառուցվում են ֆորմալ (պաշտոնական) կանոնները, ինչը հնարավորություն է տալիս առաջին կարգի ընդհանուր ինստիտուտների՝ պետություն, հարստություն, գույք, ժառանգություն, խնամակալություն, ստրկություն, ճորտատիրություն, վաճառականություն, վաշխառություն, գյուղացիություն, ձեռնարկատիրություն և այլն տնտեսականացմանը:

Սեփականության իրավունքի իրականացման ինստիտուցիաները զգալի չափով հիմնվում են այդ էվոլյուցիոն սխեմայի երկրորդ մակարդակի վրա: Այստեղ հատուկ նշանակություն են ձեռք բերում հասարակական կյանքի ընթացքի կազմակերպական և իրավական մեխանիզմները:

Երրորդ մակարդակում ընդգրկվում են կառավարման ինստիտուցիաները՝ կառավարությունը, կուսակալությունը, գործընկերությունը, ընկերակցությունը, նահանգապետությունը, ներկայացուցչությունը, գործադրությունը, կարգադրությունը, աստիճանավորությունը, նախարարությունը, գերատեսչությունը, տնօրինությունը և այլն: Առանց այս ինստիտուտների տնտե-

սական համակարգի կատարյալ գործառումը, պայմանագրերի կազմումն ու կատարումն իրականանալի չի կարող դառնալ: Չէ որ սոցիալական վերահսկողությունն ի սկզբանե տրված է ինստիտուտին, նա որպես այդպիսին է իր գոյությունով: Այդ մակարդակում կոնկրետ գործարքների վերաբերյալ պայմանագրային հարաբերությունների կառավարումը դառնում է ինստիտուցիոնալ տեսության նոր օբյեկտ, դրա նպատակը տնտեսական սուբյեկտների գործունեության մեջ տրանսակցիոն ծախսերի նվազեցումն է, որոնք կապված են այդ գործունեությունում տեղեկատվության անորոշության և ոչ լրիվության հետ:

Ուիլյամսոնի սխեմայի չորրորդ մակարդակում ինստիտուցիաների վերլուծությունն առնչվում է մակրոտնտեսական մակարդակում օպտիմալության խնդիրների լուծման մարգինալ (սահմանային) վերլուծության մեթոդների հետ: Ընդ որում նրանցում ֆիրման ներկայացվում է որպես արտադրական ֆունկցիա:

Պատմական որևէ կոնկրետ ժամանակահատվածի շրջանակներում ինստիտուցիաների տեսակների բազմաքանակության առկայությունն առաջ է բերում դրանց դասակարգման, կանոնակարգման, նրանցից յուրաքանչյուրի խորության ու բովանդակության որոշման խնդիրը: Ինստիտուցիաների համակարգի տեսակային խմբավորումը թույլ է տալիս դրա «ուղղահայաց» և «հորիզոնական» հատվածների՝ ստորադասային և ներդաշնակային փոխհարաբերությունների հատման տեղում առանձնացնել և նկարագրել դրանց հանդես գալու յուրահատուկ պատմական և իրական ձևերը, ելնելով ցանկացած ընդգրկվածության տնտեսական համակարգի առաջացման, կառուցվածքի, գործառույթների, վիճակի և դինամիկայի դիրքերից:

Ինստիտուտների բնութագրումը նպատակահարմար է իրականացնել դրանց գիտական դասակարգմամբ պայմանավորված՝ ելնելով հասարակության տնտեսական համակարգի պատմական տարատեսակից: Տնտեսական համակարգի մի պատմական տարատեսակից մյուսին անցման գործընթացում ինստիտուտները փոխակերպվում են: Այդ տեսակների ներսում դրանք կարող են փոխակերպվել, ինտեգրվել, բաժանվել նոր տեսակների՝ պահպանելով ընդհանուր էական գծերը: Ինստիտուցիաների և ինստիտուտների փոխակերպումը և բաժանումը կախված է տնտեսական համակարգի կազմի, կառուցվածքի, գործառման, վիճակի ու շրջանակների ինչպես նաև միջավայրի ներգործությունների, ուրիշ համակարգերի հետ միաձուլվելու, կամ գերհամակարգի կազմից անջատվելու հետ: Հետևաբար, ինստիտուտների փոփոխությունների պատճառ կարող են հանդիսանալ ինչպես իրենց սեփական էվոլյուցիան, այնպես էլ տնտեսական համակարգերի այլ գործոնների փոփոխությունները:

Ինստիտուտների առանձնահատկությունները հիմնականում կապված են դրանց ծագման, առաջացման հետ և դիտվում են քաղաքակրթական և կացութաձևային տեսանկյուններից՝ հենվելով բնական և հասարակական երևույթներում առկա «լրացուցչության» սկզբունքի վրա[1]:

Հասարակության իրական պատմական ձևերում փոխադարձ լրացնող այդ իմաստները գոյություն ունեն միշտ միասին: Ուստի և, «ինստիտուտ» բազային հասկացությունը կարելի է ներկայացնել դրա երկու՝ քաղաքակրթական և կացութաձևային բովանդակությունների միասնությամբ, իսկ տարբերությունները դրանց իրականացման երկու կոնկրետ պատմական ձևերում՝ ա) ավանդական, նորմատիվային, արժեքային, բ) նախնադարյան համայնքային, ստրկատիրական, ֆեոդալական (ճորտատիրական), կապիտալիստական: Իրական տնտեսական գործունեության մեջ դրանք մաքուր ձևով գոյություն չունեն, դրանցից յուրաքանչյուրը միաժամանակ կրում է կացութաձևային և քաղաքակրթական գծեր որպես հասարակության համակարգային էվոլյուցիոն հատվածքներ:

Ինստիտուտների դասակարգման հարաբերական բարդությունը դրսևորվում է նրանում, որ այն իրենից ներկայացնում է բավականաչափ մեծ քանակությամբ տարրերի բաժանում ըստ

---

[1] Новиков Л. Цивилизация как идея и как объяснительный принцип исторического процесса. // Цивилизация вып. 1. М 1992, стр.13.

մակարդակների, ինչը թույլ է տալիս ստեղծել դասակարգման ծառ, ինչպես նաև վերլուծության հարմարության համար օգտագործել ֆորմալացում: Սոցիալական և տնտեսական ինստիտուտների բնույթը բարդ է և այդ պատճառով էլ գոյություն ունեն բազմաթիվ սկզբունքներ, որոնց հետ այդ դասակարգումները պետք է համակերպվեն: Իսկ ընդհանուր մոտեցումը կայանում է նրանում, որ առանձին էմպիրիկ տեսակները պետք է տարբերվեն մեկը մյուսից, չլինելով սակայն հակադիրներ:

Ինստիտուտների դասակարգումը պետք է ելնի իրենց համակարգայնությունից, արտացոլի համակարգային բնութագրերը՝ գործառույթայնությունը, կառուցվածքայնությունը և դինամիկությունը: Դ.Նորտի խոսքերով արտահայտված՝ «Տնտեսության պատմության և տնտեսական զարգացման գլխավոր խնդիրն է՝ հաշվի առնել տնտեսական և քաղաքական ինստիտուտների էվոլյուցիան, որոնք ստեղծում են արտադրողականության աճը խթանող տնտեսական միջավայր»[1]: Գործառութային, կառուցվածքային և ծագումնաբանական մոտեցումների հիման վրա ինստիտուտների յուրաքանչյուր տարատեսակի և ենթատարատեսակի շրջանակներում կարելի է առանձնացնել որոշակի ոլորտին, ճյուղին, տնտեսավարման մակարդակին, տարածման մասշտաբներին, հասունության աստիճանին, զարգացման փուլերին, ստորակարգությանը պատկանելիության հայտանիշով դրանք խմբավորող կարգեր և ենթակարգեր:

Օգտագործելով օրինակ ոլորտային մոտեցում՝ նպատակահարմար է տարբերակել, արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, ֆինանսական, առևտրային ինստիտուտները: Ինստիտուտներն ըստ տնտեսության ներկայացման մակարդակների կարող են տարբերակվել մեգա-, մակրո-, միկրո, մեզո ինստիտուտների, ըստ ընդգրկման՝ գլոբալ, երկրային, տարածաշրջանային, տեղային և այլն: Ինստիտուտների ստորակարգային (հիերարխիկ) կառուցվածքային դասակարգումը թույլ է տալիս առանձնացնել նաև ինստիտուտների, բյուրոկրատական և ժողովրդավարական (դեմոկրատական) տեսակները: Իրական տնտեսական պրակտիկայում տնտեսավարող սուբյեկտների միջև հարաբերությունները հիմնվում են ինչպես պատեռնալիզմի, այնպես էլ գործընկերության սկզբունքներից ելնելով: Զարգացման ինստիտուտների խմբավորման համար որպես հիմք կարող են հանդիսանալ դրանց հասունության աստիճանը և վիճակը: Ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման համար բնութագրական է վիճակների բազմաքանակությունը, դինամիկությունը, էվոլյուցիոն զարգացման այլընտրանքայնությունը: Ըստ հասունության աստիճանի կարելի է առանձնացնել զարգացող, զարգացած և քայքայվող ինստիտուտները և որոշակի վիճակով, և պարամետրերով բնութագրվող այդ գործընթացների փուլերը:

[1] North D. Institutions // I. of Economic Perspectives. 1991, vol.5, N1, p.98.